Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ

a r a v o t d a i l y

86/4182/ 9 մայիսի 2012 չորեքշաբթի

ISSN 1829-2224
12074
9 771829 222003

Ա

## Լավատեսական սցենար

Ժամանակին Լեւոն Տեր-Պետրոսյանը մի շատ դիպուկ միտք էր արտահայտել. եթե դու կարող ես օրինական դաշտում (ոչ սամիզդատի մակարդակով) գործող լրատվամիջոցով տվյալ վարչակարգն անվանել «ռեժիմ», ապա իրականում ոչ մի ռեժիմ էլ գոյություն չունի: Իհարկե, խոսքը բռնապետության մասին է, որը անկախ Հայաստանի 20 տարվա պատմության մեջ չկար եւ, հուսով եմ, չի էլ լինելու: Առավել եւս՝ հիմա, երբ հայաստանյան եթերում կան երկու կուսակցությունների դիրքորոշումն արտահայտող հեռուստաընկերություններ, իսկ այդ կուսակցությունները՝ ԲՀԿ-ն եւ ՀՅԴ-ն, ընտրարշավի ժամանակ եւ ընտրությունների օրը դրսեւորում էին միանգամայն ընդդիմադիր կեցվածք: Եթե նույնիսկ հաշվի չառնենք կայքերն ու սոցցանցերը, որոնք համեմատաբար նոր երեւույթ են, եւ թերթերը (ընդդիմադիր թերթեր միշտ էլ եղել են), ապա կարելի է արձանագրել, որ իրավիճակը լրատվական դաշտի առումով միանգամայն նոր է: Ընդդիմադիր հեռուստաընկերություններ Հայաստանի եթերում չեն եղել. կար «Ա1+»-ը, որը անկախ էր, եւ որը եթերազրկվեց 2002 թվականին, մնացածը, մինչեւ 2012-ի ապրիլը, «ազատ էին, բայց պատասխանատու»:

Մնում է, որ՝ 1/ այն երկու հեռուստաընկերությունների «սեփականատեր» քաղաքական ուժերը պահպանեն իրենց հարաբերական ինքնուրույնությունը, 2/ այդ լրատվամիջոցները չլինեն չափից դուրս կուսակցականացված եւ հնարավորություն տան արտահայտվելու թե այլ ընդդիմադիրներին՝ ՀԱԿ-ին եւ «Ժառանգությանը», թե իշխանության ներկայացուցիչներին եւ թե ստեղծված համակարգից դուրս գտնվող մարդկանց, 3/ առաջին երկու պայմանների դեպքում իշխանությունն այնքան խոհեմություն դրսեւորի, որ չհետապնդի այս երկու հեռուստաընկերություններին: (Ի դեպ, հետաքրքիր է, թե ինչու մեզ գրեթե ցույց չեն տալիս ընտրակեղծիքների մասին հավաստող տեսանյութեր):

Այդ երեք հանգամանքների միահյուսումը կնպաստի ամբողջ հեռուստատեսային դաշտի առողջացմանը, որովհետեւ՝ եթե երկուսը վայելում են որոշակի ազատություն, ապա ինչո՞ւ մնացածը չպիտի վայելեն: Դուք կասեք՝ միեւնույն է, համացանցն ազատ է: Բայց նախ՝ ինտերնետը մատչելի է հայաստանցիների միայն մեկ երրորդին: Երկրորդ՝ առայժմ ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ աշխարհում թերթերն ու հեռուստաընկերությունները շատ ավելի պրոֆեսիոնալ են, քան համացանցային ռեսուրսները: Եթե այդ լավատեսական սցենարը գործի, հեռուստատեսությունն իսկապես կկարողանա ավելի ակտիվորեն բարձրացնել հասարակությանը հուզող խնդիրները: Բնականաբար, դրանք ոչ բոլորին են հետաքրքրում. դե, այդ քաղաքացիներն էլ կշարունակեն սերիալներ ու զվարճալիքներ նայել:

Երբ ասում են, որ Հայաստանում բռնապետություն է, դա պարզապես հռետորական դարձվածք է՝ ուրիշ ոչինչ: Ավելին՝ երբ ասում են, թե այս ընտրությունների արդյունքում ոչինչ չի փոխվել, դա էլ խիստ չափազանցություն է: Ընդհանրապես կյանքի օրենքն է՝ ամեն մի նոր օր նոր բան է բերում:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# Տեր-Պետրոսյանը մանդատը հանձնեց Բագրատյանին

«Իմ պատգամավորական մանդատը վայր եմ դնելու»,- երեկ հանրահավաքում հայտարարեց Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ իր տեղը տալով Հրանտ Բագրատյանին. «Սա չի նշանակում, որ դադարեցնում եմ իմ քաղաքական գործունեությունը: Թեեւ համարում եմ, որ լիովին կատարել եմ իմ պարտքը ժողովրդի հանդեպ, երկրի հանդեպ, բայց դա ինձ իրավունք չի տալիս հեռանալ ասպարեզից, քանի դեռ Հայաստանը գտնվում է այսպիսի թշվառ վիճակում: Եթե Հայաստանը նորմալ երկիր լիներ, ես հանգիստ կզբաղվեի իմ գիտությամբ եւ այգեգործությամբ: Շարունակելու եմ անել ամեն ինչ՝ Հայաստանը քոչարյանասերժական հանցագործ վարչախմբից ազատելու համար: Լավ իմացեք, Սերժն էլ թող լավ իմանա, պայքարելու եմ այնքան ժամանակ, որքան կների իմ ֆիզիկական ուժը, եւ որքան իմ ծառայությունները պահանջված կլինեն ժողովրդի կողմից: Ես շատ զգացված եմ, որ դուք այսքան ուրախ տրամադրություն ունեք»:

ՀԱԿ-ի հանրահավաքի մասին՝ էջ 3:




## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### ՀՀԿ-ն ստացավ ԱԺ-ի «վերահսկիչ փաթեթը»

«Քաղաքական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնի» փորձագետ Ռուբեն Մեհրաբյանն «Առավոտի» հետ զրույցում անդրադառնալով նոր գումարման խորհրդարանում ՀՀԿ-ԲՀԿ կոալիցիա կազմելու հավանականությանը՝ ասաց, թե՝ ՀՀԿ-ին այդպիսի կոալիցիա պետք չէ, եւ կասկած հայտնեց, որ ՀՀԿ-ին առանձնապես դա կհետաքրքրի, որովհետեւ նոր ԱԺ-ում «վերահսկիչ փաթեթն» արդեն ՀՀԿ-ն ունի:

Կարդացեք էջ 3:

### «Եթե շատ խնդրեն, աղաչեն՝ կարող է կազմենք»

Aravot.am-ը ՀՖՖ նախագահ, ՀՀԿ պատգամավոր ընտրված Ռուբեն Հայրապետյանից հետաքրքրվեց՝ ի՞նչ եք կարծում, ԲՀԿ-ն ՀՀԿ-ի հետ այս անգամ կոալիցիա կկազմի՞: Պարոն Հայրապետյանը պատասխանեց. «Ցանկալի չի, բայց չեմ իմանում, դեռ հայտնի չի: Մենք նրա կարիքը չունենք: Հանրապետականը կոալիցիայի կարիք չունի: Եթե շատ խնդրի, միգուցե թույլ տանք: Եթե շատ խնդրեն, աղաչեն, որ տվեք մեզ շանս՝ արդարացնենք մեզ՝ կարող է: Բայց չգիտեմ դեռ՝ հանրապետականները թույլ կտա՞ն»: Գնահատելով ընտրությունները եւ մեկնաբանելով ՀԱԿ-ի բողոքները, որ ՀՀԿ-ն ընտրակաշառքով է անցել՝ պարոն Հայրապետյանն ասաց. «Բա ՀԱԿ-ը ի՞նչ պետք է ասի, ՀԱԿ-ը, Լեւոն Տեր-Պետրոսյանը 7 երգ գիտի, 7-ն էլ արջի ու տանձի մասին»:

### Աթոռներից պոկելու են՝ ժողովրդին ոտքի հանելով

Aravot.am-ի հետ զրույցում համամասնականով պատգամավորի մանդատ ստացած Նիկոլ Փաշինյանը մեր հարցին՝ եթե Սահմանադրական դատարան դիմեն ու հաջողության չհասնեն, ի՞նչ մեթոդներով են պատրաստվում իրենց խոսքերով «պոկել այս իշխանությանն իրենց աթոռներից», քանի որ իրենք էլ են տեսնում, որ հեշտ չեն պոկվում՝ նա պատասխանեց. «Մենք կպոկենք իրենց այդ աթոռներից: Եթե իրենք հեշտ պոկվող չեն, մենք էլ այդ պոկելու մտքից հեշտ հրաժարվողը չենք»: Ինչ վերաբերում է մեթոդներին, Նիկոլ Փաշինյանի խոսքերով՝ «բոլոր հնարավոր քաղաքական մեթոդներով, ժողովրդին ոտքի հանելով»:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 11-ին, ԿԸՀ-ի վարչական շենքում կկայանա Տիգրան Մուկուչյանի մամուլի ասուլիսը:

### Եղանակ

Երեւան +13 +26, Շիրակ +3 +18, Կոտայք +3 +18, Գեղարքունիք +3 +18, Լոռի +6 +20, Տավուշ +8 +23, Արագածոտն լեռներ +3 +18, Արագածոտն նախալեռն. 10 +25, Արարատ +12 +27, Արմավիր +12 +27, Վայոց Ձոր լեռներ +3 +18, Վայոց Ձոր նախալեռն. +12 +27, Սյունիքի հովիտներ +10 +27, Սյունիքի նախալեռներ +5 +20, Արցախ +9 +23

## ԲՀԿ նախագահի Գագիկ Ծառուկյանի ուղերձը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ

Սիրելի քույրեր եւ եղբայրներ

Մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրությունները շարունակում են գտնվել մեր հանրության ուշադրության կենտրոնում:

Այսօր ես իմ երախտիքն ու շնորհակալությունն եմ հայտնում բոլոր այն քաղաքացիներին, ովքեր հավատացին ինձ ու իմ թիմին եւ իրենց ձայնը տվեցին «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը: Այդ մարդկանց թիվը աննախադեպ մեծ է: Ավելի քան 450.000 մարդ:

Ես շնորհակալություն եմ հայտնում նաեւ բոլոր նրանց, ովքեր քվեարկեցին այլ քաղաքական ուժերի օգտին՝ պայմանով, որ իրենց որոշման հիմքում ունեցել են սեփական խիղճն ու համոզմունքները:

Ես շնորհակալություն եմ հայտնում իմ թիմակիցներին, ովքեր ահռելի աշխատանք կատարեցին, եւ կրկին վստահեցնում եմ, որ գնահատվելու են նրանք, ովքեր աչքի են ընկել իրենց արդյունավետ աշխատանքով եւ պարկեշտությամբ:

Սիրելի ժողովուրդ

Վերջին մեկ ամսվա ընթացքում ես եղել եմ մեր երկրի գրեթե բոլոր քաղաքներում, մեծ եւ փոքր համայնքներում ու գյուղերում: Հանդիպել եմ հարյուր հազարավոր իմ հայրենակիցների հետ: Այսօր ես ուզում եմ վերահաստատել այն հիմնական ուղերձները, որոնք ես ուղղել եմ ժողովրդին:

Ինձ համար չկա ավելի թանկ բան, քան ժողովրդի վստահությունը: Եվ ես այդ վստահությունը սրբորեն պահելու եմ: Ինձ համար չկա ավելի կարեւոր գործ, քան մեր ժողովրդի եւ պետության առջեւ ծառացած հիմնախնդիրները լուծելը, մարդկանց հոգսը թեթեւացնելը: Սա այլեւս իմ կյանքի հիմնական նպատակն է:

Ես վստահեցնում եմ, որ իմ հետագա քաղաքական բոլոր որոշումները կայացվելու են իմ թիմակիցների հետ խորհրդակցելուց եւ քննարկելուց հետո: Իսկ իմ բոլոր քաղաքական քայլերը լինելու են բաց, թափանցիկ եւ ժողովր-

ՍԻՎԻԼԻԹԱՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ THE CIVILITAS FOUNDATION

«Սիվիլիթաս» հիմնադրամը հրավիրում է ձեզ հերթական հանրային բանավեճին, որին մասնակցելու հրավիրվել են մայիսի 6-ին կայացած ընտրությունների արդյունքում նոր՝ հինգերորդ գումարման խորհրդարան անցած քաղաքական ուժերի ներկայացուցիչները:

Բանավեճը տեղի կունենա այս հինգշաբթի՝ մայիսի 10-ին, ժամը 14:00-ին, «Անի Պլազա» հյուրանոցի «Անի» սրահում:

Բանավեճը կվարի «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Արամ Աբրահամյանը

Նախորդ բանավեճերի տեսագրությունները կարող եք գտնել CivilNet am կայքում:

Մասնակցությունը միայն նախնական գրանցումով՝ 010 500 119:

# «Բացասաբար է ազդել ընտրացուցակների շահարկումը»

### Դավիթ Հարությունյանի պատասխանը եվրոպացի դիտորդներին



ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ եւ ԵԽԽՎ դիտորդների՝ մայիսի 6-ին Հայաստանում կայացած խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ նախորդ օրը հրապարակած նախնական եզրակացության մեջ, ի թիվս դրական շեշտադրումների, նաեւ բավականին ուշագրավ դիտողություններ կան: Երեկ ՀՀԿ գործադիր մարմնի անդամ, ՀՀ ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի Դավիթ Հարությունյանի հետ զրույցում «Առավոտը» փորձեց դրանցից մի քանիսի վերաբերյալ մեկնաբանություններ ստանալ: Առաքելության նախնական եզրակացության մեջ ասված է, որ «քարոզչության վերաբերյալ դրույթների խախտման հետեւանքով անհավասար մրցակցային դաշտը, ընտրողների վրա ճնշման դեպքերը եւ դիմումների ու բողոքների քննության գործընթացներում թերությունները մտահոգությունների տեղիք են տվել»: Այս առիթով պարոն Հարությունյանը նկատեց. «Այդ մասը շատ ընդհանուր է գրված, եւ ինձ համար պարզ չէ, թե իրենք ինչն են նկատի ունեցել: Կան հարցեր, որոնք, ես կարծում եմ, կուղղենք դիտորդներին, որպեսզի հասկանանք, թե իրենք ի՞նչը նկատի ունեն»: Ինքը՝ Դավիթ Հարությունյանը, վստահ է, որ քարոզչության տեսանկյունից «աննախադեպ» քայլ է եղել այս ընտրություններում՝ եւ մեծ գովազդային պաստառների, եւ բոլոր թեկնածուներին անվճար տարածքներ տրամադրելու, ընդ որում՝ ոչ միայն պետական, այլ նաեւ ՏԻՄ-երի ենթակայության տակ գտնվող, եւ հեռուստատեսության մասով:

Դիտորդները նաեւ արձանագրել են, որ «այն եղանակը, որով ԿԸՀ-ն անդրադարձել է բողոքներին, խարխլել է արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքի հիմքերը»: Դավիթ Հարությունյանն այս արձանագրման առիթով դիտորդների հետ սկզբունքորեն համաձայն չէ. «Մենք այդ քննարկումը ունեցել ենք շատ ավելի վաղ, երբ իրենց երկարաժամկետ առաքելությունը եկել էր Հայաստան: Ես բացարձակապես չեմ կիսում իրենց դիրքորոշումը այդ հարցի վերաբերյալ: Իրենք ի սկզբանե համարում էին, որ նախատեսված ձեւը արդյունավետ լինել չի կարող, իսկ ես համարում եմ, որ կարող է: Ի դեպ, այս առումով ես չեմ տեսել որեւէ բողոք նաեւ Վենետիկի հանձնաժողովի փորձագետների կողմից, երբ նրանք ուսումնասիրում էին օրենքը»: Թեկնածուների գրանցման ընթացակարգի վերաբերյալ դիտորդները վերապահումներ չունեն: Ավելին, արձանագրել են, որ «ընդհանուր առմամբ ամբողջական է եղել, թեպետ քաղաքացիության եւ մշտական բնակության հինգ տարվա պահանջը չի համապատասխանում ԵԱՀԿ պարտավորություններին եւ Եվրոպայի խորհրդի չափանիշներին»: Դավիթ Հարությունյանը պարզաբանում է՝ դա մեր Սահմանադրության պահանջն է. «Ես հասկանում եմ, որ Եվրոպայում կան ժամանակակից մոտեցումներ, այնուհանդերձ, քանի դեռ մեր Սահմանադրությունը չի փոխվել, դա մնում է օրենքով»:

Դիտորդները նաեւ արձանագրել են, որ. «Ընտրողների ցուցակների ճշտությունը եւ ընտրակեղծիքների համար դրանց հավանական չարաշահման հնարավորությունը, որպես մտահոգություն, բարձրացվել է մեծ թվով թեկնածուների կողմից՝ ավելացվելով ընտրական գործընթացների նկատմամբ ընդհանուր թերահավատությունը: Մինչ ընտրության օրը ընտրողների ցուցակները հասանելի են եղել հասարակության կողմից ստուգման համար, իսկ իշխանությունները տարբեր միջոցներ են ձեռնարկել դրանց որակը եւ ճշտությունը վերանայելու եւ բարելավելու համար: Չնայած ընտրողների գրանցմանն ուղղված բարեփոխված օրենսդրությանը, ընտրողների ցուցակների ճշտության վրա բացասաբար է ազդել տարբեր հաստատությունների միջեւ տվյալների փոխանակման ոչ բավարար կարգավորվածությունը»: Քանի որ Դավիթ Հարությունյանը համոզված է, որ այս անգամ մեր ընտրացուցակները եղել են «լավագույնը» Հայաստանի ընտրական ողջ պատմության ընթացքում, ուստի հակադարձում է. «Ընտրողների վրա բացասաբար է ազդել այն, որ բոլոր քաղաքական ուժերը փորձել են դա շահարկել: Սակայն բոլոր շահարկում-հարցադրումները մենք ստուգել ենք, եւ դրանք 99 տոկոսով եղել են անհիմն: Ի վերջո, ցուցակները չեն փոխվել, հրապարակված եղել են, եւ եթե որեւէ մեկը պատրաստ է հիմա անգամ նման հարց բարձրացնել, ես սիրով պատրաստ եմ պատասխանել ցուցակների հետ կապված բոլոր հարցադրումներին»:

Եվրոպացի դիտորդների կարծիքով՝ քարոզչության ընթացքում Ընտրական օրենսգրքի քարոզչությանն առնչվող դրույթները երբեմն խախտվել են, մեծամասամբ՝ տեղական իշխանությունների եւ որոշ կուսակցությունների կողմից. «Սա ներառում է դասերի ժամանակ քարոզչական միջոցառումներին ուսուցիչների ներգրավվածությունը, քարոզարշավի ընթացքում կուսակցությունների հետ կապ ունեցող կազմակերպությունների կողմից մարդկանց եւ համայնքներին նվերներ տալը եւ քարոզչական նյութեր փակցնելը դպրոցների եւ համայնքային նշանակության շենքերի վրա»: Դավիթ Հարությունյանը կրկին արձանագրում է, որ դիտարկումը ընդհանրական է, փաստարկված չէ, եւ ոչ էլ ինքը նման փաստեր ունի. «Իրենց միջանկյալ զեկույցում այն, ինչը որ ներկայացվել էր, ընդհանրապես որեւէ քննադատության չէր կարող դիմանալ, քանի որ մարդիկ ուղղակի սխալ էին մեկնաբանում օրենքի պահանջը: Կարծում եմ՝ հիմա փորձել են շտկել իրավիճակը՝ նման բան գրելով: Համենայնդեպս, առանց հստակ ձեւակերպումների ինձ դժվար է գնահատական տալ, թե որքանով է նրանց ասածն օբյեկտիվ: Ես չեմ բացառում, որ ինչ-որ տեղեր կարող էին նման խախտումներ լինել, թեեւ կարծում եմ, որ դրանք չեն կրել մասսայական բնույթ: Այնուհանդերձ, ցանկացած նման հարցադրում պետք է ամրապնդված լինի որոշակի դեպքերի նկարագրությամբ, որպեսզի այն գոնե փոքր-ինչ արժանահավատ հնչի»:

Դիտարկումների եւ հակադարձումների այլ մանրամասները կարդացեք Aravot.am կայքում՝ http://www.aravot.am/2012/05/08/68739/ եւ http://www.aravot.am/2012/05/08/68727/:

# Դիտորդին համոզել են, որ ձայների հաշվման գործընթացին չմասնակցի

Մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների օրվանից հետո լուրեր տարածվեցին, թե միջազգային դիտորդների մի մասը ուշացումով է ներկայացել ընտրատեղամասեր, երբեմն էլ ոչ սթափ վիճակում: Ուստի Aravot.am-ը «Ընտրությունը քոնն է» հ/կ-ի նախագահ Հարություն Համբարձումյանից հետաքրքրվեց՝ ի՞նչ են փաստել իրենց դիտարկումները միջազգային դիտորդական առաքելությունների առումով: Պարոն Համբարձումյանը պատասխանեց. «Ես այն կարծիքին եմ, որ ԵԱՀԿ դիտորդների հայտարարությունը մի փոքր ավելի խիստ էր, քան նախկին ընտրությունների կապակցությամբ: Ցավում եմ, քանի որ եթե նախկինը խայտառակ ընտրություններ էին, ԵԱՀԿ դիտորդները դրական էին հանդես գալիս, իսկ այս մեկի կապակցությամբ, որոնք քչից-շատից դրական ընտրություններ էին, ԵԱՀԿ դիտորդները բացասաբար են արտահայտվում, թե՝ նկատել են խախտումներ եւ այլն»:

Հետաքրքրվեցինք՝ ըստ պարոն Համբարձումյանի՝ դա պատվե՞ր էր, թե՞ կա այլ մեկնաբանություն: Հ. Համբարձումյանը նկատեց. «Չեմ կարծում, որ պատվեր էր: Ուղղակի նախորդ ընտրությունների ժամանակ բազմիցս նշվել է իրենց անտարբեր վերաբերմունքի մասին, թե գալիս՝ դիտարկում են, որ ամեն ինչ հոյակապ է, իսկ հետո, երբ տեղական կազմակերպությունները խախտումներ են գրանցում, նրանց ինչ պիտակ ասեք՝ չեն կպցնում: Փաստորեն մի քիչ ուշացած նրանք հասկացել են այս խնդիրը եւ ցավոք, քչից-շատից դրական ընտրությունների ժամանակ ավելի շոր են հանդես գալիս»:

Հետաքրքրվեցինք՝ ընտրությունների դիտարկման ժամանակ իրենց դիտորդները խնդիրներ ունեցե՞լ են: Պարոն Համբարձումյանը պատասխանեց. «Մի քանի ընտրատեղամասերում հրաժարվել են արձանագրության քաղվածքը տալ դիտորդին, եղել են դեպքեր, երբ առավոտյան թույլ չեն տվել դիտորդին մուտք գործել ընտրատեղամաս՝ պատճառաբանելով, թե վկայականը եւ լիցենզիան պիտի կրծքին փակցված լինեն: Իսկ մենք գրպանիկի մեջ էինք նախատեսել, որ այն դրվի, ուստի երկար պայքարելուց հետո թողել են տեղամաս: Այսինքն՝ տեխնիկական խնդիրներով պայմանավորված՝ իզուր քաշքշուկներ: Մի տեղամասում էլ համոզել են դիտորդին, որ ձայների հաշվման գործընթացը երկար կտեւի, մինչեւ ժամը 04.00-05.00-ն, ուստի հորդորել են նրան չսպասել»:

Պարոն Համբարձումյանը Aravot.am-ի հետ զրույցում խոստացավ ընտրությունների արդյունքները մեկնաբանել հունիսի կեսերին, երբ ընտրական գործընթացները ավարտված կլինեն:

ՏԱԹԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Առավոտ
aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 09.05.2012

# Քոչարյանի մեսիջները ուղղված էին ՀՀԿ-ի դժգոհ հատվածին

Ասում է քաղաքագետը ու հավելում, թե Ռոբերտ Քոչարյանը հույսը կապում էր այս ընտրությունների գլխավոր ինտրիգի հետ՝ կհավաքի՞ արդյոք ՀՀԿ-ն 50+1 տոկոս խորհրդարանում, թե՞ ոչ:

Մայիսի 3-ին ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանն էլի մի բացառիկ հարցազրույց տվեց «Մեդիամաքս» գործակալությանն ու անդրադարձավ հարցերի լայն շրջանակի՝ ԲՀԿ-ի հետ իր կապերին ու ազդեցությանը, գործող իշխանության հետ հարաբերություններին, իշխանությունների վարած տնտեսական քաղաքականությանը, Պուտինի հետ իր շփումներին ու նախընտրական վիճակին: Ակտիվ քաղաքականություն վերադառնալու հնարավորությանն անդրադառնալով էլ՝ ասաց. «Հայաստանում այսօր փոփոխությունների հասարակական մեծ սպասում կա, իսկ դա նշանակում է, որ հասարակության անտարբերության աստիճանը անդառնալի չէ, ու այդ հանգամանքը խիստ դրական է: Որքանո՞վ են մարդիկ կապում այդ փոփոխությունները ակտիվ քաղաքականություն իմ վերադարձի հետ՝ սա է ինձ հետաքրքրող հարցը: Առայժմ լիարժեք պատասխան ես չունեմ»: ԱԺ ընտրություններն ավարտվեցին, ու քաղաքական դաշտում՝ առավելապես խորհրդարանում ուժերի հարաբերակցության մասով որոշակի պարզություն արդեն կա, ուստի «Առավոտը» Քոչարյանի հարցազրույցին հետհայացք նետելով՝ այս եւ այլ հարցերի շուրջ զրուցեց «Քաղաքական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնի» փորձագետ Ռուբեն Մեհրաբյանի հետ:

- Ի՞նչ եք կարծում, ինչու նախկին նախագահը որոշեց կրկին խոսել ու այն էլ ընտրություններից երեք օր առաջ, եւ Ձեր դիտարկմամբ՝ ո՞ւմ եւ ի՞նչ ուղերձներ էր պարունակում նրա հարցազրույցը:

- Կարծում եմ՝ ժամանակի ընտրության մասով նրա գլխավոր մեսիջն ուղղված էր հանրությանն ու քաղաքական շրջանակներին՝ ասելու, որ ինքը քաղաքականությունից չի հեռացել ու, համենայնդեպս, այս պահին քաղաքականությունից հեռանալու մտադրություն չունի, որ ինքը ոչ թե նախկին քաղաքական գործիչ է, այլ գործող քաղաքական անձ է:

- Դա նշանակում է, որ Քոչարյանը որոշակի հավակնություննե՞ր ունի, որոնք պայմանավորված էին կիրակի տեղի ունեցած ընտրություններով:

- Դա նշանակում է՝ այո, նա հավակնություններ ունի, ու նույնիսկ ասաց, թե դեռ չի որոշել՝ ի՞նչ դրսեւորումներ կունենան իր այդ հավակնությունները:

- Արդյոք նրա այդ հավակնությունները պայմանավորվա՞ծ էին ընտրությունների արդյունքներով ու մասնավորապես՝ նաեւ ԲՀԿ-ի հնարավոր հաջողություններով:

- Կարելի է ասել, որ նա հույսը կապում էր այս ընտրությունների գլխավոր ինտրիգի հետ՝ կհավաքի՞ արդյոք ՀՀԿ-ն 50+1 տոկոս խորհրդարանում, թե՞ ոչ: Եթե դա տեղի չունենար՝ իհարկե, Քոչարյանի հավակնությունները կարող էին ավելի նյութական դառնալու շանսեր ձեռք բերել: Համենայնդեպս, նման ցանկության առկայությունը Քոչարյանն ինքը չբացառեց:

- Ընտրությունները տեղի ունեցան: Որքանո՞վ դրանք կազդեն Քոչարյանի հավակնությունների վրա:



- Ընտրությունների արդյունքում ձեւավորվեց մի ստատուս-քվո, որտեղ, եթե խոսենք բաժնետիրական ընկերություններին վերաբերող տերմինաբանությամբ, Սերժ Սարգսյանն ունի հսկիչ փաթեթ, իսկ Ռոբերտ Քոչարյանն իր տրամադրության տակ ունի արգելափակող մեխանիզմներ: Այս ստատուս-քվոն երկուստեք ձեռնտու վիճակ է եւ որեւէ սպառնալիք չի պարունակում ոչ գործող նախագահ Սերժ Սարգսյանի, ոչ էլ նախկին նախագահ Քոչարյանի համար: Չեմ կարծում նաեւ, թե այս պայմաններում Քոչարյանի կողմից հակազդեցության տարրեր պարունակող գործողություններ կլինեն: Ըստ այդմ, Քոչարյանն իր քաղաքական մեծ հավակնությունների մասով խոշոր հաշվով այլեւս չեզոքացված է, եւ դա իր անդրադարձը կունենա նաեւ ԲՀԿ-ի քաղաքական վարքագծի վրա:

- Կարծում եք՝ ԲՀԿ-ն կգնա՞ ՀՀԿ-ի հետ վերստին կոալիցիա կազմելու ճանապարհով:

- Կարծում եմ՝ կոալիցիա կազմելու իմաստ չկա, որովհետեւ ՀՀԿ-ին այդպիսի կոալիցիա պետք չի, իսկ ԲՀԿ-ին պե՞տք է, թե՞ ոչ՝ ԲՀԿ-ի խնդիրն է: Չեմ կարծում, որ դա ՀՀԿ-ին առանձնապես կհետաքրքրի: Այն, որ ԲՀԿ-ն Քոչարյանի համար լծակի դեր է կատարում՝ միանշանակ է, բայց Քոչարյանի հարցազրույցում Սերժ Սարգսյանին հասցեագրված ուղերձն անուղղակի էր: Նրա մեսիջների հասցեատերերը հատկապես ՀՀԿ-ում Քոչարյանի կողմնակիցներն էին, որոնք ՀՀԿ-ի դժգոհ հատվածում քիչ չեն:

- ՀԱԿ-ԲՀԿ հնարավոր համագործակցությունն ԱԺ-ում կարո՞ղ է ճանապարհ հարթել Քոչարյանի վերադարձի համար:

- Որ ԲՀԿ-ն ու ՀԱԿ-ն ԱԺ-ում էլ կհամագործակցեն, եթե ֆորս-մաժորային իրավիճակ չլինի՝ ենթադրվում է, բայց նույնիսկ այդ դեպքում Քոչարյանի վերադարձը թեեւ գործնականում բացառել չի կարելի, բայց հիմա, երբ ընտրությունների արդյունքներն ամրագրվել են, դա զուտ տեսականորեն է հավանական: Ես կարծում եմ՝ ի վերջո, որոշիչն այդ հարցում այն չէ, թե ինչ կպայմանավորվեն ԲՀԿ-ն ու ՀԱԿ-ը, առավել եւս, որ նրանց միջեւ պայմանավորվածությունները հանրության շահերի հետ հեռավոր կապ անգամ ունենալ չեն կարող, այլ, բարեբախտաբար, որոշիչն այն է, թե ինչպես դա կընկալի հանրությունը: Իսկ ես կարծում եմ, որ հանրության մեջ Քոչարյանի վերաբերյալ բացասական ընկալումները, գոնե իմ տպավորությամբ, շատ ավելի գերակայող են, քան դրական սպասելիքները:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

## «Լինելու եմ հասանելի բնակիչների համար»



Մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրությունները, ցավոք, եւս մեկ անգամ ապացուցեցին, որ Հայաստանում ոչնչացված են իշխանության ձեւավորման ընտրական մեխանիզմները: Իշխանական ներկա համակարգը նաեւ ցույց տվեց, որ շարունակում է Սուքիասյան ընտանիքի անդամների քաղաքական հետապնդումը, եւ ընտրողների իրավունքները ոտնահարելով՝ հենց ինքն է ընտրելու քաղաքացիների ապագան:

Ընտրություններում ես չեմ պարտվել, «հաղթել են» ընդամենը պետության վարչական, ուժային, ֆինանսական ռեսուրսները, կատարելության հասցված կեղծիքների եւ անվավերների մեխանիզմը: Ես շնորհակալություն եմ հայտնում ընտրատարածքի բոլոր բնակիչներին, ովքեր մայիսի 6-ին գնացին ընտրատեղամասեր եւ արտահայտեցին իրենց ազատ կամքը: Շնորհակալություն եմ հայտնում իմ օգտին քվեարկած ընտրողներին, իմ նախընտրական թիմի անդամներին, բազմաթիվ կամավորների, վստահված անձանց, ովքեր պարտաճանաչ կերպով եւ մեծ ոգեւորությամբ աշխատեցին նախընտրական ժամանակաշրջանում եւ ընտրությունների օրը:

Վստահեցնում եմ, որ անկախ ընտրությունների արդյունքից՝ իմ հնարավորությունների չափով կիսելու եմ ընտրատարածքի բնակիչների հոգսերը եւ միշտ հասանելի եմ լինելու նրանց համար:

Նոր գումարման Ազգային ժողովին ցանկանում եմ բեղմնավոր եւ օրինաստեղծ աշխատանք:

ՍԱՐԻԲԵԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

## «Ի՞նչ է վճարելու Սերժ Սարգսյանը իր «դայակներին»



Երեկ Ազատության հրապարակում ՀԱԿ-ի հանրահավաքը բացեց Արամ Մանուկյանը: Նա նշեց, թե «ինչ այլանդակություններ են արվել ընտրություններին»: Դրանք, ըստ նրա, արվել են հիմնականում Երեւանից դուրս. «Հայաստանում այնքան մարդ չկա, ինչքան քվեարկել են: Երկնքից մարդիկ են թափել ընտրությունների օրը: Կոտայքում, Տաշիրում 100 տոկոս մասնակցություն է եղել, Արմավիրում, Սյունիքում՝ 95 տոկոս, 92, 93, 98 տոկոս, Վայքում՝ 100 տոկոս, եւ վերջին ռեկորդը լսեք, ժողովուրդ, Արագածոտն՝ մասնակցություն՝ 102 տոկոս՝ մարգահետի գյուղում: Ցուցակում կա 84 մարդ, քվեարկել են 86-ը»:

Իսկ Լեւոն Զուրաբյանի տվյալներով՝ այս ընտրություններին լցոնվել է մոտ 600 հազար ձայն. «2012-ի ընտրությունները կարելի է համարել հիմնովին կեղծված, քանի որ ընտրություններն անցել են խախտումներով, ադմինիստրատիվ ռեսուրսի, ընտրակաշառքի բաժանմամբ»:

Ըստ նրա՝ պետք է համախմբել ՀԱԿ-ի դրոշի տակ ժողովրդի հոգեւոր մարդկանց, պատերազմ հայտարարել այս անբարո իշխանություններին. «Եթե սրանք մի քիչ էլ մնան իշխանության՝ ազգի սերուցքը ուղղակի լքելու է Հայաստանը»: Լեւոն Զուրաբյանը, անդրադառնալով միջազգային դիտորդների եզրակացությանը, տեղեկացրեց, որ առաջին անգամ այդ զեկույցում չեն գրված հայտարարություններ, թե իբր սա առաջընթաց էր նախորդ ընտրությունների համեմատ, որ տեղի են ունեցել ազատ եւ արդար ընտրություններ. «Ոչ մի նման գնահատական չկա, սա առաջին անգամ է: Չեն ասել անգամ, որ տեղի ունեցած ընտրախախտումների ծավալը չի ազդել ընտրությունների արդյունքների վրա: Սա նշանակում է, որ անգամ եվրոպական դիտորդները ապշած են այն խախտումների ծավալից, որին նրանք ականատես դարձան»:

Արամ Մանուկյանի խոսքերով էլ՝ «էն բորշչի պատմությունն է, որ ուզում ես ասել՝ առ քո գդալ բորշչը, ու կերեք իրար: Բայց մենք այս զրկանքները ազատության համար ենք կրում»:

ՀԱԿ հանրահավաքին Լեւոն Տեր-Պետրոսյանը նախ շնորհակալություն հայտնեց այն քաղաքացիներին, ովքեր իրենց ձայն են տվել. «Չեմ ուզում խոսել ընտրակաշառքի, կրկնաքվեարկության մասին, խոսել դրանք ընտրություններ կոչելու ծաղրի մասին: Եթե ՀՀԿ-ականները կարծում են, թե արդար հաղթանակ են տարել, թող կարծեն, եթե պնդում են, թե Հայաստանի պատմության լավագույն ընտրություններն են անցկացրել՝ թող պնդեն: Չնայած դիտորդների նշած բազմաթիվ թերություններին՝ այս ընտրությունները օրինական են համարում, թող համարեն: Հայաստանի իշխող վարչախումբը մնալու է տգետների, գողերի, մարդասպանների նույն խամաճիկը: Աշխարհը Սերժ Սարգսյանի վարչախմբին գուրգուրելու է այնքան ժամանակ, քանի դեռ չի կորզել նրանից հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողովի կազմավորումը: Ահա սա է կեղծված ընտրությունների այն գինը, որը Սերժ Սարգսյանը վճարելու է իր դայակներին: Իրենց ձայները վաճառողները, ժողովրդի կամքի վրա բռնացած բոլոր մանր ու միջին պաշտոնյաները դա շուտով իրենց մաշկի վրա են զգալու»:

Ըստ Ստեփան Դեմիրճյանի՝ այս իշխանություններն ու արդար ընտրություններն անհամատեղելի են, մեթոդները չեն փոխվել. «Ի՞նչ է ստացվում, որ ինչքան այս ժողովուրդն աղքատանում է, այնքան ավելի մեծ սիրո՞վ է լցվում այս իշխանությունների նկատմամբ»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

# «Միջին խավի պաշտոնյաները վարկաբեկում են կառավարությունը»

## Այս կարծիքին է գործարարը, որը քաղաքապետարանի եւ դատարանների ձեռքը «կրակն է ընկել»

ՀՀ կառավարությունը փոքր ու միջին բիզնեսին աջակցելու ու դրա զարգացմանը նպաստելու մի շարք ծրագրեր է իրականացնում, սակայն պետական որոշ օղակների թեթեւ ձեռքով փոքր բիզնեսի ներկայացուցիչները հայտնվում են «կործանման» եզրին:

Սուսաննա Մարտիրոսյանը տարիներով պայքարում է Բաղրամյան 76 հասցեում գտնվող իր փոքրիկ կրպակը չկորցնելու համար: Բանն այն է, որ տիկին Սուսաննան մինչեւ 2001 թվականը կրպակի հողի վարձակալության գումար է վճարել Արաբկիրի դեռ այն ժամանակվա թաղապետարանին, սակայն հետո Երեւանի քաղաքապետարանը վարձակալության պայմանագիրը կնքելու իրավունքը փոխանցել է մետրոպոլիտենին: Իսկ մետրոպոլիտենը, հողի վարձը 10 անգամ ավելացնելուց հետո, սկսել է պայքարել կրպակն ապամոնտաժելու համար: Տիկին Սուսաննայի պատմելով՝ «Ես ամեն ինչ անում եմ իմ բիզնեսը փրկելու համար. պարբերաբար դիմում էի քաղաքապետարան, որպեսզի համաձայնություն տան կրպակը մի փոքր վերանորոգելու, թարմացնելու: Բայց քաղաքապետարանից ուղարկում էին մետրոպոլիտենի վարչություն, այստեղից էլ՝ քաղաքապետարան»: Տիկին Սուսաննան դիմել էր Քանաքեռ-Զեյթունի ընդհանուր իրավասության դատարան՝ կրպակի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջով: Իսկ մետրոպոլիտենն էլ



իր հերթին դիմել էր դատարան՝ կրպակն ապամոնտաժելու եւ մոտ 1 միլիոն դրամ որպես վնաս փոխհատուցելու պահանջով: Սուսաննա Մարտիրոսյանի փաստաբանի ներկայացմամբ՝ առաջին ատյանը որոշել էր, որ կրպակը չի կարող դիտվել անշարժ գույք, հետեւաբար չի կարող ճանաչել դրա նկատմամբ սեփականության իրավունքը. «Մենք էլ հակադարձել ենք՝ ինչպե՞ս չի կարող դիտվել, եթե նախկինում դրա նկատմամբ եղել է սեփականության իրավունքի պետական գրանցում: Օրենքով միայն անշարժ գույքի նկատմամբ է պետությունը գրանցում սեփականության իրավունք: Պետությունն արդեն տվել էր սեփականության վկայական, այսինքն՝ արդեն ընդունել էր կրպակը որպես անշարժ գույք: Բացի դրանից, կրպակի սեփականատերը նաեւ գույքահարկ է վճարել, իսկ գույքահարկի մասին օրենքը հստակ սահմանում է՝ գույքահարկը գանձվում է միայն անշարժ գույքից: Պետեկամուտների կոմիտեով էլ հաստատված է, որ կրպակի սեփականատերը՝ «Կաղզվան» կոոպերատիվը, գործունեություն է ծավալել, ուստի կրպակի անշարժ գույք լինելու փաստն անվիճելի է»: Փաստաբանի խոսքերով՝ դիմել են նաեւ Վերաքննիչ դատարան, որն էլ գործը հետ է ուղարկել առաջին ատյան՝ նորից քննելու համար: Այսօր նաեւ Վճռաբեկ դատարանում է մետրոպոլիտենի հայցը՝ կրկին ապամոնտաժելու եւ վնասի փոխհատուցման պահանջով:

«Առավոտի» հետ զրույցում Սուսաննա Մարտիրոսյանն ասաց. «Այդ ամենը մետրոյի ղեկավարությունն անում է, որպեսզի ինձ՝ կրպակով հանդերձ, տարածքից «մաքրի», քանի որ իմ կրպակի հարեւանությամբ գտնվող 2 կրպակների տարածքը քաղաքապետարանը օտարել է Երեւանի քաղաքապետարանի ավագանիներից մեկին: Չնայած Վերաքննիչը չի բավարարել վնասի փոխհատուցման պահանջը, սակայն դեռեւս Վճռաբեկի որոշում էլ պետք է լինի: Ընդ որում, եթե Վճռաբեկն էլ որոշի, որ իմ կրպակը անշարժ գույք չէ, ուրեմն մետրոպոլիտենն իրավունք կունենա այն ապամոնտաժելու: Եվ ես վերջնականապես կհամոզվեմ, որ դատարանը կողմնակալ է եղել: Մետրոպոլիտենի իրավաբանի ամուսինը Երեւան քաղաքի Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Վարդան Աբրահամյանն է, որի կինը դատական նիստերից մեկից հետո բարձրաձայն բոլորի ներկայությամբ հայտարարել է՝ դուք գիտեք, թե իմ ամուսինն ով է, եւ գիտեք, թե ինչ կարող է լինել: Նույնիսկ Վերաքննիչ դատարանի դատավորն է ասել՝ մենք գիտենք, թե ձեր ամուսինն ով է, բայց մենք պետք է որոշում կայացնենք օրենքի սահմաններում, եւ այդպես էլ գործեց»:

Տիկին Սուսաննայի խոսքերով՝ «Մի կողմից՝ պետությունը իբր թե աջակցում է փոքր ու միջին բիզնեսին, մյուս կողմից էլ՝ ամեն ինչ անում է, որ հիասթափվենք, զզվենք, փակենք բիզնեսը ու թողնենք-գնանք այստեղից»:

Սուսաննա Մարտիրոսյանը պատրաստվում է նամակով դիմել նաեւ ՀՀ նախագահին, վարչապետին եւ Երեւանի քաղաքապետին. «Իրենց կարգախոսն է՝ «Հավատանք, որ փոխենք». ես նույնիսկ այսքան երկար պայքարի ընթացքում միշտ հավատում էի, իսկ հիմա հուսահատ վիճակում եմ. մի՞թե հիմա էլ ինչ-որ միջին խավի պաշտոնյաներ կարող են լուրջ ապօրինություն անել ու վարկաբեկել մի ամբողջ կառավարություն»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# Հանրակացարանից վտարում են 6 ընտանիքի



Տիկին Աիդան՝ ՀԱԿ հանրահավաքին:

Եղեգնաձորում մի հանրակացարան կա, որտեղ ինքնակամ զբաղեցրել եւ արդեն տարիներ ի վեր ապրում են բազմաթիվ ընտանիքներ: Վերջերս բնակիչներին քաղաքապետարանից հորդորել են ազատել տարածքը: Առայժմ այդ հորդորները ոչ պաշտոնապես են, բայց բնակիչներն արդեն ահը սրտերում սպասում են վտարմանը: Եղեգնաձորում ՀԱԿ-ի հանրահավաքին այս հարցով ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ էին ուզում զրուցել հանրակացարանի բնակիչները: Սակայն Հայ ազգային կոնգրեսի առաջնորդն իր ելույթն ունենալուն պես հեռացավ՝ գրաֆիկից հետ չընկնելու համար, իսկ բնակիչները մնացին շվարած: «Առավոտի» հետ զրույցում բնակիչներից մեկը խնդրեց Տեր-Պետրոսյանին փոխանցել, որ իրենց խնդրով զբաղվի. «Մեզ վտարում են, մենք հայտնվելու ենք փողոցում»: Տիկին Աիդան բնակվում է այդ հանրակացարանում 10 տարուց ավելի: Նրա խոսքերով՝ «Եթե հնարավորություն ունենայի մի տեղ ապրելու, այս 10 տարվա ընթացքում գնացած կլինեի: Բայց չունեմ, հազիվ օրվա ապրուստի, օրվա հացի մասին ենք մտածում, այդ ի՞նչ ենք աշխատում, որ տան համար էլ հասցնենք փող հավաքել»: Աիդան պահում է 3 անչափահաս երեխաների, ընդ որում՝ նրանցից մեկը հաշմանդամություն ունի. «Աղջիկս ծնվել է մանկական պարալիչով: Ես հիմա 3 երեխաներիս առնեմ՝ ո՞ւր գնամ: Ու ինձ նման մեր հանրակացարանում 5-6 ընտանիք կա: Լավ օրից չենք մենք ապրում հանրակացարանում, այդ պայմաններում»: Ինչպես պատմեցին բնակիչները, իրենց ասել են, որ հանրակացարանի այդ շենքն առած է, ու վաղ թե ուշ սեփականատերը կպարտադրի, որ տարածքն ապօրինի զբաղեցրած քաղաքացիները դուրս գան: Բնակիչները խնդրում էին իրենց տեր կանգնել՝ նշելով, որ 10 տարի վաղեմության ժամկետը իրենց դեպքում չի՞ գործելու. «Այդ սենյակները այդքան տարի զբաղեցրել ենք, մերն է, ինչի՞ հիմա հիշեցին դրա մասին, բա մենք ո՞ւր գնանք, բա պետությունը հանրակացարանը ծախելու, սեփականատիրոջ մասին մտածում է, բա մեր ապրելու մասին չի՞ մտածում»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

## Ակցիա՝ «Զանգ զինակցին»

«Արմենտել» ՓԲԸ-ն շնորհավորում է Հայրենական մեծ պատերազմի բոլոր վետերաններին Հաղթանակի օրվա առթիվ եւ հայտարարում «Զանգ զինակցին» տոնական ակցիայի անցկացման մասին: Ակցիայի շրջանակում մայիսի 9-ին Հաղթանակի զբոսայգում Հայրենական մեծ պատերազմի վետերանները հնարավորություն կունենան անվճար զանգահարելու իրենց մարտական ընկերներին, հարազատներին եւ մտերիմներին՝ աշխարհի ցանկացած երկիր: Պաշտոնական միջոցառումներից հետո Հաղթանակի զբոսայգում «Արմենտել» ընկերության ներկայացուցիչները շնորհավորելու են վետերաններին եւ առաջարկելու զանգահարել իրենց զինակիցներին, նրանց ընտանիքների անդամներին եւ շնորհավորել տոնի առթիվ: «Ուրախ եմ «Արմենտել» ընկերության անունից շնորհավորել Հայրենական մեծ պատերազմի բոլոր վետերաններին Հաղթանակի օրվա առթիվ: «Զանգ զինակցին» տոնական ակցիայի անցկացումը մեր ընկերության համար դարձել է բարի ավանդույթ, եւ շատ հաճելի է, որ այդ օրը յուրաքանչյուր վետերան կարող է հիշել հաղթանակները, կիսվել ուրախությամբ եւ շնորհավորել ընկերներին, նույնիսկ, եթե նրանց բաժանում են հազարավոր կիլոմետրեր»,- նշեց «Արմենտել» ՓԲԸ գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն:

«Զանգ զինակցին» տոնական ակցիան կանցկացվի 2012թ. մայիսի 9-ին՝ Երեւանի Հաղթանակի զբոսայգում, մինչեւ ժ. 15:00-ը:

## Կջրազրկվեն

«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, պլանային շինարարական աշխատանքների հետ կապված, ս.թ. մայիսի 10-ին, ժամը 09.00-21.00-ը, կդադարեցվի Նոր Նորքի 5-րդ զանգվածի եւ հարակից տարածքների ջրամատակարարումը: Վերանորոգման աշխատանքների հետ կապված՝ ս.թ. մայիսի 10-ին, ժամը 10.00-ից մինչեւ մայիսի 11-ը, ժամը 10.00-ն կդադարեցվի Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի Ջրնալ կայան թաղամասի, Այնթափ գյուղի, 9-րդ կիլոմետրի եւ հարակից տարածքների ջրամատակարարումը: Մայրաքաղաքի մեկ այլ հատվածում, վերանորոգման աշխատանքների հետ կապված, ս.թ. մայիսի 10-ին, ժամը 10.00-ից մինչեւ մայիսի 11-ը, ժամը 10.00-ն կդադարեցվի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան եւ Լուկաշին թաղամասերի, Գր. Զոհրապ, Չուխաջյան փողոցների, Հասրաթյան 25/3, 25/4 շենքերի, Ստանդարդյան կայարանի, Մերձավան գյուղի, Հաղթանակ թաղամասի վերին հատվածի եւ հարակից տարածքների ջրամատակարարումը:

Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը պատճառված անհանգստության եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

# Պահանջում են ոստիկաններին պատասխանատվության ենթարկել

«Մենք ենք այս քաղաքի տերը» քաղաքացիական նախաձեռնությունը նամակով դիմել է ՀՀ Գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին, ՀՀ Հատուկ քննչական ծառայության պետ Ա. Միրզոյանին. «Սույն թվականի ապրիլի 29-ին Մաշտոցի պուրակում խաղաղ նստացույցի մասնակիցները Հայաստանի Հանրապետության իրավական եւ օրենսդրական կարգը հարգելով՝ պաշտպանում էին իրենց սահմանադրական իրավունքները: Այդ պատճառով նրանք ոստիկանության կողմից ենթարկվել են անօրինականության եւ բռնության: Այս մասին մենք արդեն իսկ հրապարակային հայտարարել ենք ու նշել, որ այն բոլոր ոստիկանները, որոնք մասնակցել են այս անօրինականությանն ու բռնություններին պետք է պատասխանատվության ենթարկվեն համապատասխան մարմինների եւ արդարադատական համակարգի կողմից:

Հարկ է նաեւ նշել, որ ոստիկանության գործադրած անօրինականությունից եւ բռնությունից հետո, երբ մարմնական վնասվածքներ ստացած նստացույցի մասնակիցները դիմում էին հիվանդանոց բուժօգնություն ստանալու՝ հրապարակավ հայտարարելով, որ դիմելու են բռնության գործադրած ոստիկաններին պատասխանատվության ենթարկելու համար, ոստիկանները առանց որեւէ պատճառի, օրենքի կոպիտ խախտմամբ ազատությունից զրկել են յոթ հոգու՝ նպատակ ունենալով կոծկել իրենց անօրինականությունները եւ բռնի գործողությունները եւ կարծելով, որ դրանից հետո մենք չենք բարձրացնի ոստիկաններին պատասխանատվության ենթարկելու հարցը:

Դիմում ենք Ձեզ՝ պահանջով, որ միջոցներ ձեռնարկեք անհապաղ պատասխանատվության ենթարկելու այն բոլոր ոստիկաններին, որոնք անօրինականություն եւ բռնություն են գործադրել սույն թվականի ապրիլի 29-ին Մաշտոցի պուրակում խաղաղ նստացույցի մասնակիցների նկատմամբ»:

Առ aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 09.05.2012

# Սղառողը՝ «ՀայՌուսգազարդի» դեմ



Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր Սիմիզար Հովսեփյանի նախագահությամբ, մայիսի 2-ից սկսվել է «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության դեմ սղառող, ՀՀ փաստաբանների պալատի անդամ Գեւորգ Դավթյանի՝ վնասների հաշվառմամբ գազամատակարարումը վերականգնելու պահանջի մասին հայցի դատաքննությունը:

«Առավոտը» տեղեկացրել է, որ 2011թ. հոկտեմբերի 20-ին գազի ցուցմունքներ վերցնող «ՀայՌուսգազարդ» ընկերության աշխատակցուհին երկու մյուս աշխատակիցների հետ, առանց զգուշացնելու, հանել էին փաստաբանին պատկանող բնակարանի գազի հաշվիչը, որի արդյունքում դադարեցվել էր բնակարանի գազամատակարարումը: Անցյալ տարվանից մինչ օրս բնակարանի գազամատակարարումը վերականգնված չէ, եւ ըստ էության անտեսվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (պետական մարմին) որոշումը, որով պահանջվել էր վերականգնել բնակարանի գազամատակարարումը:

Դատաքննության ընթացքում ցուցմունքներ տվեցին հայցվորի կինը եւ «ՀայՌուսգազարդի» երեք աշխատակիցները:

«ՀայՌուսգազարդի» նախաձեռնությամբ հրավիրված վկաների ցուցմունքներում կային մի շարք հակասություններ: Սղառող փաստաբանը մեզ հետ զրույցի ժամանակ ասաց. «Գլխավոր վկան՝ Կարինեն, մի դեպքում նշում էր, որ լսել է կնոջս եւ իմ հեռախոսային խոսակցությունը, իբր ես կարգադրել եմ չստորագրել որեւէ արձանագրություն, մյուս դեպքում էլ նշում էր, թե դա իր ենթադրությունն է, անգամ նշեց, որ լսել է, թե իբր ես հեռախոսով գոռացել եմ տիկնոջս վրա: Մյուս երկու վկաները նույնպես ցուցմունքներ տվեցին եւ նշեցին, թե հնարավոր չէր լսել հայցվորի հեռախոսազրույցը»:

Դատակոչված վկաներից մեկն էլ նշեց, որ գազահաշվիչը եւ հայցվորի բնակարանը գտնվում են միմյանցից մոտ 1-2 մետր հեռավորության վրա, մինչդեռ Գ. Դավթյանի բնակարանի արտաքին պատի վրա չի գտնվում գազի հաշվիչը: Այն սղառողի բնակարանից գտնվում է մոտ 35-45 մետր հեռավորության վրա:

Հետաքրքրական էր այն փաստը, որ խախտման արձանագրությունը թեեւ ստորագրել էին երկու աշխատակիցներ (հսկիչներ), սակայն իրականում աշխատանքներին մասնակցել են երեք աշխատակիցներ (հսկիչներ): Կազմված արձանագրության մեջ նշված է, որ իբր հայցվորը՝ Գեւորգ Դավթյանը, հրաժարվել է արձանագրությունը ստորագրելուց, թեեւ իրենք այն ներկայացրել են հայցվորի կնոջը: «Եվ, ընդհանրապես, արդյոք կինս իրավունք ունե՞ր այն ստորագրելու, իհարկե՝ ոչ, քանի որ բաժանորդը հանդիսանում եմ ես»,- ասում է Գեւորգ Դավթյանը:

«ՀայՌուսգազարդի» աշխատակիցների ցուցմունքների համաձայն, նրանք իբր մինչեւ գազահաշվիչի արկղի դիմապակին փոխելը պարտադիր տեղյակ են պահել բաժանորդներին, տվյալ դեպքում՝ նաեւ հայցվորին, եւ հրավիրել գազի հաշվիչի մոտ, մինչդեռ «ՀայՌուսգազարդ» ընկերության ներկայացուցիչն իր առարկություններում նշել է, որ դիմապակին փոխելու համար կատարվելիք աշխատանքների մասին տեղեկացնելու անհրաժեշտություն չի եղել:

Չնայած դրան՝ իրենք փորձել են տեղեկացնել հայցվորին, որը տեղում չի եղել (փաստորեն, «բարի կամք են դրսեւորե՞լ»): «Ի՞նչ եք կարծում, հարգելի բաժանորդներ, Ձեր գազահաշվիչի ցուցմունքը վերցնելուց, դիմապակին փոխելուց, արկղը բացելուց կամ այլ գործողություն կատարելուց առաջ Ձեզ հրավիրո՞ւմ են կամ նախազգուշացնո՞ւմ են այդ գործողությունների մասին, կամ ընդհանրապես իրենք ներկայանո՞ւմ են, Ձեզ ցույց տալի՞ս են իրենց կարգավիճակը հաստատող փաստաթուղթ: Դուք այդ հարցերի պատասխանը ինձանից լավ գիտեք»,- դատարանում ասում էր Գ.Դավթյանը:

Մայիսի 15-ին կիրառարկվի վճիռը:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

## Թեկնածուի օգտին քվեաթերթիկները ձեռքին բերել է



Ընտրական տեղամասում քվեների հաշվարկն ավարտվելուց հետո Դիլիջան քաղաքի 41/04 տեղամասային հանձնաժողովի նախագահ Հասմիկ Սմբատյանը Տավուշի մարզի թիվ 41 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով 3 թեկնածուների քվեաթերթիկները պարկով է բերել Իջեւան՝ թիվ 41 ԸԸՀ: Հասմիկ Սմբատյանի ձեռքում եւ ոչ թե պարկում են եղել այս ընտրատարածքի 4-րդ թեկնածուի, ՀՀԿ անդամ Հակոբ Հակոբյանի (որը ընտրությունների արդյունքում պատգամավոր վերընտրվեց) օգտին տրված քվեաթերթիկները:

«Հակոբյանի քվեաթերթիկները գրկին մտավ ներս»,- ասաց թիվ 41 ԸԸՀ նախագահ Աիդա Սարգսյանը (լուսանկարում): Վերջինս այս ընտրատարածքում ձայների թվով երկրորդ տեղը զբաղեցրած թեկնածու Վահե Վարդապետյանի կինն է:

Ընտրական օրենսգրքի այս խախտման վերաբերյալ հանձնաժողովն արձանագրություն է կազմել: Տիկին Աիդան մեր զրույցում ասաց, որ ամուսնու չընտրվելու պատճառով ինքը չի վհատվել, ծանր ապրումներ չի ունեցել:

## Իջեւանի քաղաքապետը կդիմի դատարան

Մայիսի 7-ին հերթական անգամ չի կայացել Իջեւան համայնքի ավագանու նիստը: Ինչպես տեղեկացանք Իջեւանի քաղաքապետ Վարդան Ղալումյանից՝ քվորում չի եղել, ավագանու 15 անդամից նիստին ներկա է եղել 7-ը: Քվորում ապահովելու համար նիստին ավագանու 8 անդամ պետք է ներկայանար:

Առանց լուրջ պատճառաբանությունների նիստերին չներկայացող ավագանու անդամների թվում կան մարզպետարանի ենթակա պետական հիմնարկների տնօրեններ: Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը ցանկության դեպքում կարող էր ապահովել նրանց ներկայությունը: Հիշեցնենք, որ մարզպետ Ա. Ղուլարյանը ՀՀԿ Տավուշի մարզային կառույցի ղեկավարն է, իսկ քաղաքապետ Վարդան Ղալումյանը ԲՀԿ անդամ է:

Տավուշի մարզկենտրոն Իջեւանը մարզի 62 համայնքներից միակն է, ուր ավագանին չի հաստատել 2012 թվականի բյուջեն:



Մայիսի 31-ին լրանում է Իջեւանի ավագանու ընտրության մեկ տարին: Իջեւանի քաղաքապետ Վարդան Ղալումյանն ասաց, որ մտադիր է մայիսի 31-ից հետո դիմել դատարան՝ անհիմն կերպով նիստերից բացակայող ավագանու անդամների լիազորությունները դադարեցնելու պահանջով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

### Սանհանգույցում հայտնաբերվեց

ԱԻՆ փրկարար ծառայությունից տեղեկացրին, որ ստացվել է ահազանգ այն մասին, որ Երեւանի Թբիլիսյան խճուղու նրբանցքի թիվ 1-ին շենքի 33-րդ բնակարանի բնակիչը չի արձագանքում զանգերին: Փրկարարները, ոստիկանների ներկայությամբ, բացել են նշված բնակարանի դուռը, որի սանհանգույցում հայտնաբերվել է 1933թ. ծնված Ն. Գաստարյանի դին:

### Լցակայանի աշխատողը վնասվել է

ՀՀ ոստիկանությունից տեղեկություն է ստացվել, որ Գեղարքունիքի մարզի Գագարին գյուղի մոտ գտնվող գազալցակայանում տեղի է ունեցել ավտոմեքենայի գազի բալոնի պայթյուն: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ Սեւան-Լճաշեն ճանապարհի «Բաղդար» ՍՊԸ-ին պատկանող գազալցակայանում՝ լիցքավորելիս պայթել է Խ. Հովհաննիսյանին պատկանող «ԳԱԶ-3110» մակնիշի 11 UL 834 պ/հ ավտոմեքենայի գազի բալոնը:

Լիցքավորման կետի աշխատակից՝ 1979թ. ծնված Կ. Սարգսյանը վնասվածքներով տեղափոխվել է Սեւանի հիվանդանոց, այնուհետեւ՝ Երեւանի վնասվածքաբանության եւ օրթոպեդիայի գիտական կենտրոն: Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը միջին ծանրության է: «ԳԱԶ-3110» ավտոմեքենայի վարորդ, 1959թ. ծնված Խ. Հովհաննիսյանը տեղափոխվել է Սեւանի հիվանդանոց: Պայթած բալոնի բեկորներից վնասվել է գազալցակայանում գտնվող «ԳԱԶել» մակնիշի 20 SS 734 եւ 609 US 34 պետհամարանիշներով 2 ավտոմեքենա:

### Դեղորայքային թունավորմամբ

«1-03» ծառայությունից հայտնել են, որ դեղորայքային թունավորումով «Մուրացան» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի Սունդուկյան 15ա շենքի 10-րդ բնակարանի բնակչուհի՝ 1999թ. ծնված Ինեսա Սիմոնյանը: Նույն օրը դեղորայքային թունավորումով «Մուրացան» բժշկական կենտրոն է տեղափոխվել նաեւ Երեւանի Օհանովի 2 շենքի 62-րդ բնակարանի բնակչուհի՝ 2010թ. ծնված Միլենա Հարությունյանը: Ըստ բժիշկների՝ տուժողների վիճակը բավարար է:

### Ծառուկյանները՝ հիվանդանոցում

Մայիսի 8-ին թունավորման նախանշաններով Երեւանի Արաբկիրի 21-րդ փողոցի թիվ 7 տան բնակչուհի՝ 1982թ. ծնված Մարինե Գեւորգյանը տեղափոխվել է «Արմենիա», իսկ նույն հասցեի բնակիչներ՝ 2002թ. ծնված Անի եւ 2000թ. ծնված Լեւոն Ծառուկյանները՝ «Մուրացան» բժշկական կենտրոններ: Բժիշկների գնահատմամբ՝ տուժածների առողջական վիճակը միջին ծանրության է:

### Երեկվա արտահոսքը

Մայիսի 8-ին, ժամը 02.40-ին ահազանգ է ստացվել, որ Երեւան-Մասիս ավտոճանապարհին՝ «Կոնտինենտալ» ռեստորանային համալիրի մոտակայքում, գազատարից տեղի է ունեցել արտահոսք:

Պարզվել է, որ «Մերսեդես S600» մակնիշի 20 OS 650 պ/հ ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ բախվել գազատար խողովակին, ինչի հետեւանքով վնասված խողովակից տեղի է ունեցել արտահոսք՝ առանց հրդեհի: Բարեբախտաբար, տուժածներ չկան: Մինչեւ «1-04» ծառայության աշխատակիցների կողմից գազի արտահոսքի վերացումը՝ հրշեջ-փրկարարները տեղում իրականացրել են հերթապահություն:

# Մշակութայինժառանգության պահպանները տեղյա՞կ չեն ԱՕՔՍ-ի խնդրից

Չնայած ՀՀ մշակույթի նախարարության Պատմության ու մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Երեւանի տարածքային բաժնի պետ Կարո Այվազյանն ու «Լոկալ Դիվելոփերզ» ընկերության նախագահ Սամվել Մայրապետյանը հերքել են Աբովյան 3 հասցեում գտնվող ԱՕՔՍ-ի շենքը քանդելու մասին լուրերը, սակայն թեման շարունակում է «տաք» մնալ: Ի դեպ, Սամվել Մայրապետյանը «Մեդիամաքսին» ասել էր, թե պատկառելի գումարներ են ներդրվել Աբովյան փողոցի N 3 ու 3/1 հուշարձան-շենքերի հիմքերի ու պատերի ուժեղացման աշխատանքների իրականացման համար ու հավաստիացրել, թե ԱՕՔՍ-ի շենքը դեռ մի բան էլ նորոգվում է, մինչդեռ «Մենք ենք այս քաղաքի տերը» նախաձեռնության ակտիվիստները այլ համոզում ունեն՝ շենքը քանդվելու է, տեղում էլ հյուրանոց է կառուցվելու: Փորձը ցույց է տալիս, որ հանրային մտահոգությունները միշտ էլ արդարացված են լինում:

Aravot.am-ը ի պաշտոնե մշակութային ժառանգությամբ զբաղվող պետական կառույցներից ու Հայաստանի ճարտարապետների միությունից փորձեց պարզել, թե ինչ են մտածում խնդրի առնչությամբ: Շատերը գերադասեցին «անշառ» մեկնաբանություններ անել կամ




ընդհանրապես իրենց վրայից գցել պատասխանատվությունը:

Ճարտարապետների միության նախագահ Մկրտիչ Մինասյանից հետաքրքրվեցինք՝ ինչու իր ղեկավարած կառույցը չի ընդվզում 130-ամյա վաղեմությամբ պատմամշակութային արժեք համարվող ԱՕՔՍ-ի շենքի ճակատագրի համար: «ԱՕՔՍ-ի շենքի հետ ի՞նչ են անում որ»,- անկեղծ զարմացավ պարոն Մինասյանը: Ապա հավելեց. «Մի անգամ էլ է այդ հարցը բարձրացվել, ես ինքս գնացել-տեղում նայել եմ: Հիմա չգիտեմ, թե ինչի համար են մարդիկ ցույց անում: ԱՕՔՍ-ի շենքին կից՝ բակի կողմից կան կցակառույցներ, որոնք շենքին չեն պատկանում: Հնարավոր է՝ դրա վերաբերյալ լինի, թե չէ՝ ԱՕՔՍ-ի շենքին ոչ մեկը ձեռք չի տա»: Մեր հարցին՝ վստա՞հ է, ճարտարապետների միության նախագահը պատասխանեց՝ վստահ եմ:

Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայության պետ Վլադիմիր Պողոսյանից եւս մեկնաբանություն խնդրեցինք: Այս կառույցի ղեկավարն ասաց, որ իրենց «թեժ գծին» եւս նման հարց է եղել, որին պատասխանել են: «ԱՕՔՍ-ի շենքը սեփականատեր ունի, եւ տվյալ պարագայում հուշարձանի պահպանությունը իրականացնում է սեփականատերը, իսկ մեր ՊՈԱԿ-ը զբաղվում է միայն պետական սեփականություն հանդիսացող եւ չօգտագործվող հուշարձանների պահպանությամբ»,- նշեց Պողոսյանը:

ՀՀ մշակույթի նախարարության Մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների վարչության պետ Արմենակ Սարգսյանը ձեռնպահ մնաց ԱՕՔՍ-ի շենքի հետ կապված որեւէ մեկնաբանություն անելուց եւ իրեն ուղղված հարցերը վերագրեց Հուշարձանների պահպանության գործակալությանը:

ՀՀ մշակույթի նախարարությանն առընթեր պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Հակոբ Սիմոնյանին, որի ղեկավարած կառույցը զբաղված է մշակութային հուշարձանների համահավաքի ստեղծմամբ, կես կատակ-կես լուրջ հարցրինք՝ մտավախություն չունի՞, որ մինչեւ Երեւան քաղաքին նվիրված հատորյակին հասնելը, Երեւան քաղաքում այլեւս հուշարձան չի մնա: Պարոն Սիմոնյանն ասաց, թե արդեն տպագրության է պատրաստ առաջին պրակը՝ նվիրված Երեւանի վաղ եւ միջնադարյան հուշարձաններին, ինչ վերաբերում է ԱՕՔՍ-ի ներկայիս խնդրին, ինքը տեղյակ չէ, թե ինչն-ինչոց է, որովհետեւ հուշարձանի պահպանությունը իր խնդիրը չէ:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Հայտնի սրահներից հետո՝ նաեւ «Արամ Խաչատրյան»

## Նարե Արղամանյանի համար «կանաչ լույս» է վառել ճապոնացի դաշնակահար Միցուկո Ուչիդան

Վիեննաբնակ երիտասարդ դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Նարե Արղամանյանը Ցյուրիխի, Բեռլինի, Վիեննայի, Դորտմունդի, Տոկիոյի, Թել-Ավիվի եւ այլ հայտնի համերգասրահներում մենահամերգներ ունենալուց, ամերիկյան, կանադական եւ այլ նվագախմբերի հետ համերգներից հետո, առաջին անգամ «Արամ Խաչատրյան» համերգասրահում մայիսի 10-ին՝ Հայաստանի պետական Ֆիլհարմոնիկ նվագախմբի ընկերակցությամբ (դիրիժոր՝ Էդ. Թոփչյան), կներկայանա հայ երաժշտասերին:

«Առավոտը» դաշնակահարուհու հետ զրույցը սկսեց հետեւյալ հարցով՝ Երեւանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի պրոֆեսոր Ա. Գուրգենովի դասարանն ավարտելուց հետո ինչպե՞ս ստացվեց, որ հայտնվեց Վիեննայի Երաժշտության եւ կատարողական արվեստների համալսարանում:

«Հարցի ենթատեքստը, այն է՝ ինչո՞ւ չդիմեցի Երեւանի կոնսերվատորիա, հասկացա: Ստացվեց այնպես, որ ճապոնացի աշխարհահռչակ դաշնակահար Միցուկո Ուչիդայի ձեռքն էր ընկել դահլիճից արված երեւանյան մենահամերգիս ձայնագրությունը: Նա հետաքրքրվել էր, գտել ինձ ու 2004-ին հրավիրել Վիեննա՝ այնտեղ ուսումս շարունակելու առաջարկով, ընդ որում՝ իր պրոֆեսորի՝ Հայնց Մեջիմորեի դասարանում»,- հայտնեց Նարեն:

Հավելեց նաեւ, որ ճապոնացի դաշնակահարը մինչ օրս հետաքրքրվում է իր ստեղծագործական ճակատագրով, ուղղորդում է իրեն եւ արդյունքում 2010թ. շարունակում է կատարելագործվել Հանովերում՝ անվանի երաժիշտ Արի Վարդիի մոտ: Դաշնակահարուհին ներկայացրեց 2005թ. սկսած միջազգային հեղինակավոր մրցույթներում (Պոնտոսի, Մոնրեալի, Վիեննայի Յոզեֆ Դիխլերի անվան, Վալենսիայի Ջոզե Ռոքիայի) իր հաղթանակները:



Կատակեցինք, թե 22-ամյա արվեստագետը որոշել է մասնակցել բոլո՞ր հնարավոր եւ անհնար մրցույթներին: Մեր զրուցակիցը պատասխանեց. «Մրցույթը այն միջոցառումն է, ինչի շնորհիվ ոչ միայն հայտնի է դառնում ձեռք բերածդ, այլեւ պարզ է դառնում երաժշտի «թույլ տեղը», որի ուղղությամբ սկսում ես աշխատել»:

Հետաքրքրվեցինք՝ ինչպիսի՞ն է արեւմուտքի մասնագետների կարծիքը հայկական դաշնամուրային դպրոցի մասին: Նարեն հավաստիացրեց, թե եվրոպացիների կարծիքը ոչ միայն դրական է, այլեւ գործնական՝ ճանաչված դաշնակահարներ վերջին շրջանում վարպետության դասեր են անցկացնում Երեւանի կոնսերվատորիայում: Նա նաեւ կատակեց, թե իրեն էլ դիմում են՝ մեր երկրի մասին տեղեկություններ իմանալու համար:

Որոշել է ընդմի՞շտ ապրել ու ստեղծագործել Եվրոպայում: Այս հարցին դաշնակահարուհին ասաց, որ Եվրոպայում բնակվելն ու ստեղծագործելը մեկ մեծ առավելություն ունի՝ մի երկրից մյուսը գնալ-գալը հեշտ է, թեկուզ հենց ժամանակի առումով: Նշեց նաեւ, որ իրեն հասնում են այնպիսի տեղեկություններ, թե հայաստանցի երաժիշտները միշտ չէ, որ կարողանում են մասնակցել արեւմուտքում կայացող մրցույթներին, վարպետության դասերին, որովհետեւ խնդիրներ են առաջանում՝ կապված դեսպանատների հետ:

Զրույցի ավարտին Նարեն հայտնեց, որ 2012-13թթ. համերգաշրջանում նախատեսված են իր ելույթները ԱՄՆ-ի, Գերմանիայի, Նորվեգիայի, Շվեյցարիայի նվագախմբերի հետ, ինչպես նաեւ մենահամերգները՝ Բոստոնի, Ֆիլադելֆիայի, Վաշինգտոնի, Նյու Յորքի, Լոնդոնի եւ այլ քաղաքների համերգասրահներում:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Հայերն ու ֆրանսիացիները ճարտարապետական նախագծեր առաջարկեցին

«Իդեմս Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանի եւ Կլերմոն-Ֆերանի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի միջեւ համագործակցության՝ հայ-ֆրանսիական հարաբերություններում տեսնում եմ գործնական աշխատանք եւ ձեռքբերումներ»,- նման կարծիք է հայտնել Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան ֆրանսերեն հարցերով կցորդ, Արտակարգ հարցերի գծով պատասխանատու Ֆաբիեն Ներան, ԵՃՇՊՀ-ում օրերս կայացած Կլերմոն-Ֆերանի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի (ԱԲՃԴ) եւ ԵՃՇՊՀ ուսանողների ճարտարապետական նախագծերի հերթական համատեղ ստուգատես-մրցույթում:

Հայ եւ ֆրանսիացի ապագա ճարտարապետները Երեւանի Տիգրան Մեծ, Քրիստափոր, Արշակունյաց եւ Ագաթանգեղոս փողոցներով եզերված թաղամասի («Արարատ» առեւտրի կենտրոնից մինչեւ «Փեթակ») նախկին արդյունաբերական հատվածում նոր ճարտարապետաշինարարական լուծումներ են առաջարկում՝ համադրելով հին կառույցները նոր մոտեցումների հետ: Կլերմոն-Ֆերանի ԱԲՃԴ-ի 9 եւ ԵՃՇՊՀ-ի 8 ուսանողները բաժանվել էին չորս խմբերի, յուրաքանչյուր աշխատանքային խմբում ընդգրկված էին երկու բուհերի ուսանողներ եւ հայ-ֆրանսիացի դասախոսներ: Հանձնաժողովը բարձր գնահատեց հայ-ֆրանսիական ապագա ճարտարապետների ներկայացրած նախագծերը: Գլխավոր մրցանակին արժանացան Ժերոմ Մանտելեն, Կեվին Կատալդոն, Միթրա Պանահիանը եւ Նարեկ Միրզային, իսկ հատուկ մրցանակին՝ Սյունե Առաքելյանը, Նարեկ Բարսեղյանը, Ջոե Ժենդրը, Մարտեն Բուվարը եւ Գիլեմ Դելոնը: Երկու մրցանակներն էլ սահմանված էին ԵՃՇՊՀ-ի կողմից: Ստուգատես-մրցույթին մասնակցած մյուս աշխատանքային խմբերը արժանացան հավաստագրերի եւ հուշանվերների:

«Շատ գոհ եմ կազմակերպված աշխատանքներից: Այս անգամ ծրագիրը առանձնահատուկ կարեւորվում է այն իմաստով, որ առաջին անգամ է դիտարկվում արդյունաբերական տարածքների վերակառուցումն ու վերաօգտագործումը: Այն իր մեջ ներառում է հասարակական, առեւտրային, արդյունաբերական, տրանսպորտային եւ այլ ոլորտներ, ինչպես նաեւ տարբեր ենթակառուցվածքների ձեւավորում: Ընդհանրապես ուզում եմ շնորհավորել բոլոր այն ուսանողներին, ովքեր մասնակցել են ԵՃՇՊՀ-ի եւ մեր ճարտարապետական դպրոցի մեջ կայացած թվով 15-րդ ստուգատես-մրցույթին»,- իր խոսքում նշեց Կլերմոն-Ֆերանի ԱԲՃԴ-ի պրոֆեսոր եւ ԵՃՇՊՀ-ի պատվավոր դոկտոր Իվոն Կոտիեն: Նա հայ-ֆրանսիական ճարտարապետական բուհական համագործակցությունում ունեցած մեծ ավանդի համար պարգեւատրվեց ԵՃՇՊՀ-ի «Ջիմ Թորոսյան» ոսկեզօծ մեդալով: Հավելենք, որ Կլերմոն-Ֆերանի ԱԲՃԴ-ի եւ ԵՃՇՊՀ-ի միջեւ ուսումնագիտական համագործակցությանը սկիզբ է դրվել 2003-ին: 9 տարվա ընթացքում մոտ 200 ուսանող եւ 40 դասախոս այս համագործակցության շրջանակներում մասնակցել են այս փոխանակման ծրագրին: Ըստ Ֆրանսիայի բարձրագույն կրթության եւ գիտության գնահատման գործակալության, այս համագործակցությունը բարձր է գնահատվել եւ նշվել է դրա շարունակելիության անհրաժեշտությունը: ԵՃՇՊՀ-ի եւ Ֆրանսիայի ճարտարապետական բուհերի միջեւ համագործակցությունը կարեւոր քայլ է համարվում եվրոպական կրթական համակարգին՝ Բոլոնիայի գործընթացին ինտեգրվելու ուղղությամբ:

Սեփ. լր.

Առավոտ aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 09.05.2012

VIVACELL MTS ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Նվերներ՝ բարեգործական հիմնադրամից

Երեկ գերմանական «ՔՐՈՆԻՄԵՏ» բարեգործական հիմնադրամը երիտասարդական նախաձեռնությունների եւ սպորտի աջակցության բաղադրիչ ծրագրի շրջանակներում «Հայաստան» մարզական միության սեղանի թենիսի դահլիճում «Tibhar» հանրահայտ ֆիրմայի արտադրության թենիսի յոթ պրոֆեսիոնալ սեղան, սպառման նյութեր՝ գնդակներ, ռակետի դարձերեսներ, պատնեշներ, գնդակներ նվիրեց «Սեղանի թենիսի համահայկական ասոցիացիային»:

Հիմնադրամի հայաստանյան գրասենյակի տնօրեն Աննա Սեդրակյանը «Առավոտի» հետ զրույցում ասաց, որ հիմնադրամի նպատակը ասոցիացիայի հետ համագործակցության միջոցով Հայաստանում երեխաներին սպորտի մեջ ներգրավելն է, մարզումներ կազմակերպելու համար նպաստավոր պայմաններ ստեղծելով՝ նրանց հմտությունները առավել պատշաճ կազմակերպելն ու զարգացնելը:

Նրա խոսքերով՝ սա «Սեղանի թենիսի համահայկական ասոցիացիայի» հետ համագործակցության առաջին քայլն է, որը շարունակական լինելու նպատակ է հետապնդում: Հայաստանը միշտ էլ սեղանի թենիսի միջազգային մակարդակի վարպետներ է տվել, սակայն այսօր մի տեսակ անուշադրության է մատնված: Կոնկրետ այս մարզաձեւի ընտրությունը կատարվել է՝ տեսնելով Հայաստանի պատանեկան եւ կանանց ազգային հավաքականների մարզիչներ Ֆելիքս Սարգսյանի եւ Գոհար Խանզադյանի ամենօրյա աշխատանքը ինչպես հանրապետության լավագույն, այնպես էլ՝ սկսնակ թենիսիստների հետ: «Այս նախաձեռնությունը միանգամայն համահունչ է մեր հիմնադրամի հիմնական սկզբունքներին՝ աջակցել երեխաներին եւ ստեղծել բարենպաստ միջավայր՝ երեխաների բազմակողմանի զարգացման համար»,- ասաց Աննա Սեդրակյանը եւ ավելացրեց, որ սկսված համագործակցությունը շարունակելու մտադրություն կա: Մասնավորապես, քանի որ հիմնադրամը աշխատում է նաեւ հանրապետության տարբեր մարզերում, հնարավոր է, որ սկզբնական շրջանում սեղանի թենիսի համահայկական մրցումներ կազմակերպի երեխաների մեջ: «Մենք շուրջ մեկ տարի աշխատում ենք Երեւանի, Սիսիանի, Կապանի, Դիլիջանի մանկատների, գիշերօթիկ եւ հատուկ դպրոցների հետ: Նպատակ ունենք նրանց համախմբել սեղանի թենիսի մի համընդհանուր մրցման մեջ: Մեր ծրագրերի շրջանակներում են նաեւ հանրակրթական եւ բարձրագույն կրթության հաստատությունները, նրանց հետ համատեղ նորարարությունների խթանումը, ինչպես նաեւ հատուկ նախաձեռնությունները»,- ավելացրեց Ա. Սեդրակյանը:




Հայաստանի պատանեկանց ազգային հավաքականի գլխավոր մարզիչ, Եվրոպայի չեմպիոն Ֆելիքս Սարգսյանն ասաց. «ՔՐՈՆԻՄԵՏ» հիմնադրամի այս նախաձեռնությունը պետք է որ նոր թափ հաղորդի Հայաստանում մեր մարզաձեւի զարգացմանը: Մեր ունեցած սեղանները, գույքը, որոնց վրա մարզվում են մեր առաջատար մարզիկները, 33 տարեկան են եւ վաղուց արդեն չեն բավարարում ներկայիս միջազգային չափանիշներին: Սեղանի թենիսում ամբողջ գույքը պետք է փոխվի մոտ երեք տարին մեկ: Բայց մենք այդ հնարավորությունը չունենք: Դեռ վերջնականապես չենք որոշել, թե նոր գույքը, որը շատ թանկ հաճույք է, ինչպես պետք է տնօրինենք: Հնարավոր է, որ հների վրա, որոնք էլի օգտագործելի են, պարապեն սկսնակները: Իսկ արդեն վարպետության որոշակի մակարդակի հասած մեր պատանիները, երիտասարդները եւ մեծահասակները արդեն միանշանակ կմարզվեն նոր սեղանների վրա: Դրանք անպայման կծառայեն նաեւ հանրապետության առաջնություններին»:

Մեր հարցին, թե այլ մարզաձեւերում այս քաղաքականությունը տարածելու մտադրություն կա՞, Աննա Սեդրակյանը պատասխանեց. «Հիմա միանշանակ պատասխանել պատրաստ չեմ: Մեր հիմնադրամը բազմաթիվ ծրագրեր է իրականացնում: Չեմ բացառում, որ ժամանակի ընթացքում նաեւ այլ մարզաձեւերի անդրադառնանք: Բայց ներկայիս դրությամբ ավելի արդյունավետ կլինի առկա միջոցները նպատակաուղղել մի մարզաձեւի, քան մաս-մաս անել տարբեր ուղղություններով: Օրինակ, ավելի ճիշտ կլինի, եթե կարողանանք օգնել պատանի սեղանի թենիսիստներին՝ մասնակցելու միջազգային մրցումների: Իմ կարծիքով, այդպես հնարավոր է ավելի լավ արդյունքի հասնել»:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

## ԱՆԴՐԱԴԱՐՁ

## «ՀՀԿ-Ն ԲՀԿ-ին կառաջարկի՞ մտնել կոալիցիա, թե՞ ոչ»

### Ալեքսանդր Իսկանդարյանը վստահ է՝ կոալիցիա կձեւավորվի

«Կովկաս» ինստիտուտի տնօրեն, քաղաքագետ Ալեքսանդր Իսկանդարյանին քարոզարշավի ընթացքն ու խորհրդարանական ընտրությունները շատ հետաքրքիր են թվացել, քանի որ, նրա համոզմամբ, ուժերի միջեւ մրցակցությունը բավականին մեծ էր: Իսկանդարյանի փոխանցմամբ՝ հիմնականում մրցակցության մեջ էին ՀՀԿ-Ն եւ ԲՀԿ-Ն, «Ժառանգությունը», ՀԱԿ-ը եւ ՀՅԴ-Ն:

«Ընտրությունների հիմնական գործիքը ոչ թե գաղափարն էր, այլ նյութական տեխնոլոգիաները: Ուժերը, որոնք շեշտադրեցին գաղափարներ, այս ընտրություններում պարտվեցին, հաղթեցին նրանք, ովքեր ուղղորդվեցին տեխնոլոգիաներով: Այս խորհրդարանական ընտրությունները ցույց տվեցին նաեւ մարդկանց քաղաքականությունից հոգնածության աստիճանը: Այսինքն՝ մարդիկ պատրաստ էին գնալ հանրահավաքների, լսել ուժերին, դատողություններ անել, բայց միեւնույն ժամանակ վերցնել մի բանկա մուրաբան: Ընտրություններում չէր կարեւորվում գաղափարախոսությունը»,- ասաց Իսկանդարյանը՝ հավելելով, որ աննախադեպ հավասարություն էր պահպանվում ընտրությունների լուսաբանումներում, քանի որ անգամ «Հ1»-ը իր լուսաբանումներում սուբյեկտիվ կարծիք չէր հայտնում:

Քաղաքագետը հատկանշական համարեց այն, որ շատերը ընտրակաշառք չվերցրեցին, սակայն, ըստ նրա, այս խորհրդարանական ընտրություններում մեծ գումարներ ծախսվեցին:

Ինչ վերաբերում է ընտրախախտումներին, ապա այս անգամ դրանք մարդկանց ուշադրության կենտրոնում չեն եղել: Իսկանդարյանը համոզված է, որ նոր խորհրդարանն ավելի կուսակցականացված կլինի, քան նախորդն էր: Նա նաեւ վստահ է, որ կոալիցիա անպայման կձեւավորվի, ընդ որում. «Անպայման քննարկելիք հարց կլինի: Արդյոք ՀՀԿ-Ն ԲՀԿ-ին կառաջարկի՞ մտնել կոալիցիա, թե՞ ոչ: Բայց այն, որ ՕԵԿ-ը ՀՀԿ-ի հետ կոալիցիա կմտնի՝ դա հաստատ է: Բացի այդ՝ ԲՀԿ-Ն ընտրարշավի ժամանակ ավելի արմատական ընդդիմություն էր, քան, օրինակ, ՀԱԿ-ը: Ավելին՝ ԲՀԿ-Ն դեռեւս կշարունակի ընդդիմադիր կեցվածքի մեջ մնալ ՀՀԿ-ի հանդեպ»:

Իսկանդարյանը նաեւ նշեց, որ ուժերի կողմից սեւ PR գրեթե չիրականացվեց: Բանախոսը հավելեց՝ ինչպես նախորդ խորհրդարանում էր, այս անգամ եւս խորհրդարանում օլիգարխներ կլինեն:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ

## «Արուտչյանը հետաքրքիր էր եւ տաղանդավոր»

### Ստեփան Անդրանիկյանը՝ իր վրձնակցի մասին

Երեկ Եղիշե Չարենցի տունթանգարանում բացվեց Հայաստանի ժողովրդական նկարիչ Միքայել Արուտչյանի անհատական ցուցահանդեսը: Ինչպես լրագրողներին տեղեկացրեց թանգարանի տնօրեն Լիլիթ Հակոբյանը, ցուցահանդեսը նվիրված է արվեստագետի ծննդյան 115 եւ Շուշիի ազատագրման 20-րդ տարեդարձին. «Ցուցադրված են ինչպես թանգարանի ունեցած, այնպես էլ Արուտչյանի անձնական հավաքածուից նմուշներ՝ գրաֆիկական գործեր, «Երկիր Նաիրի» վեպի եւ «Եվգենի Օնեգինի» ձեւավորումները, կա նաեւ կանանցի կերպարների հրաշալի շարք: Որոշ գործեր առաջին անգամ են ցուցադրվում»:

Բացման խոսքում Ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանն առանձնացրեց 20-30-ական թթ. երկու մեծ վարպետներ համարվող Չարենցին եւ Արուտչյանին՝ նշելով նրանց դերը ժամանակի մշակութային կյանքի, հատկապես հայ գրքի եւ թատերական ներկայացումների ձեւավորման գործում. «Դա պատմական ժամանակաշրջան էր, եւ մենք պետք է ուրախ լինենք, որ Արուտչյանի նման նկարիչը Մոսկվայում մեծ գնահատականի է արժանացել»:

Aravot.am-ի հետ զրույցում Արուտչյանի ընկեր, Հայաստանի ժողովրդական նկարիչ Ստեփան Անդրանիկյանը նշեց, որ Արուտչյանն այն նկարիչներից էր, որը մեծ հետք թողեց հատկապես 1920-30-ական թվականների արվեստի վրա. «Նա հետաքրքիր էր եւ տաղանդավոր, չնայած այն հանգամանքին, որ Մոսկվայում էր բնակվում: Նրան շնորհվեց Հայաստանի պատվավոր նկարչի կոչում, բայց պետք է ասել, որ Հայաստանում նա արժանի կերպով չի գնահատվել, նրա մասին նույնիսկ մենոգրաֆիա չկա տպագրված»:

Անդրանիկյանը նշեց, որ բախտ է ունեցել Արուտչյանի հետ աշխատել «Հյուսիսային ծիածան» ֆիլմում. «Ժամանակ եղավ, որ նա հիվանդ էր եւ չկարողացավ մասնակցել նկարահանումներին, եւ ես փոխարինեցի նրան, որ չզգացվի իր պակասը: Նա զգեստների նկարիչ էր, մարդամոտ եւ հյուրընկալ անձնավորություն»:

Նշենք, որ Արուտչյանը ներկայացումներ է ձեւավորել նաեւ Երեւանի, Բաքվի, Թբիլիսիի թատրոններում, եղել է «Խաթփուշ», «Զամալլու», «Պեպո», «Դավիթ-Բեկ», «Հյուսիսային ծիածան» ֆիլմերի բեմադրող նկարիչը, պատկերազարդել ինչպես հայ, այնպես էլ ռուս հեղինակների գրքեր: «Շատ նկարիչների, ինչպես եւ Արուտչյանին, մարդիկ պարզապես չեն հիշում: Դա մեր ազգի վատ կողմն է, մենք չենք կարողանում ըստ արժանվույնս գնահատել մեր նկարիչներին»,- ասում է Ս. Անդրանիկյանը:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ